

<Վերապատրաստման դասընթացներ>, <Նոր Շահումյան> պաշտոնաթերթ, N18/161 առ
30.09.2013

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Սեպտեմբերի 13-ին և 14-ին Շահումյանի շրջան էին այցելել ԼՂՀ ԿԸՀ նախագահ Սրբուհի Արզումանյանը և այլ ներկայացուցիչներ: Քարվաճառում և Եղեգնուտ համայնքում անցկացվեց հերթական հանձնաժողովի անդամների թեկնածուների մասնագիտական դասընթացներ, որից հետո սկսվեց ստուգարքի փուլը: Մասնակցում էին շրջանից 15 համայնք, իսկ մասնակիցների քանակը կազմում էր 115 անդամ: Բացակայում էին միայն Ակնաբերդ համայնքը՝ հեռավորության պատճառով: Մոտ ժամանակներում նաև սպասվում է այնտեղ ևս այցելել:

Անդամները հանձնեցին ստուգարքը ԼՂՀ ԿԸՀ նախագահ Ս. Արզումանյանի և ԼՂՀ Շահումյանի շրջանի տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Տ. Գևորգյանի մոտ, այնուհետև ստացան համապատասխան վկայականներ:

ԼՂՀ Շահումյանի շրջանի թիվ 3 և թիվ 4 տեղամասային ընտրական հանձնաժողովների առաջին նիստը տեղի ունեցավ սեպտեմբերի 27-ին:

Ղեկավարվելով ԼՂՀ ընտրական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքում թիվ 4 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ է ընտրվել Արեգնազան Գուրգենի Ղուկասյանը, հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ռոզա Ռաշիդի Գալստյանը, իսկ հանձնաժողովի քարտուղար Մայրանուշ Փայլակի Դավթյանը: Նիստին մասնակցում էին հանձնաժողովի 9 անդամներից 8 հոգի:

Ղեկավարվելով ԼՂՀ ընտրական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքում թիվ 3 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ է ընտրվել Արմեն Դեպոյի Պրազյանը, հանձնաժողովի նախագահի տեղակալ Ժենյա Երջանիկի Հովսեփյանը, իսկ հանձնաժողովի քարտուղար Արմեն Սամվելի Հովակիմյանը: Նիստին մասնակցում էին հանձնաժողովի 9 անդամներից 9-ը:

Արփինե ՄԱՆՈՒԿՅԱՆ